

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Հաստատվել է ԵՊՀ խորհրդի

«    »-----2020թ.

թիվ----- որոշմամբ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1902/Բ16 «Քրեական դատավարություն - 3»

Որակավորման աստիճան՝ բակալավրի կրթական ծրագիր

(«Քրեական իրավունք և դատավարություն» բակալավրի ծրագիր)

Կազմեցին՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Ղազինյանը

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Դիլբանդյանը

իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Դ.Մելքոնյանը

ԵՐԵՎԱՆ 2020

1902/F16 Քրեական դատավարություն – 3 (5 կրեդիտ), շաբաթական 4 ժամ (36 ժամ դասախոսություն), 7-րդ կիսամյակ/աշնանային, եզրափակիչ գնահատումով:

### **Դասընթացի նպատակը**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել քրեական դատավարության դատական քննության փուլերի առանձնահատկությունները, դատական ակտերի վերանայման տեսակները և դատավարական կարգը, հատուկ վարույթների առանձնահատկությունները, ինչպես նաև քրեական գործերով միջազգային համագործակցության ուղղություններն ու ընթացակարգերը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

*(Գիտելիք և իմացություն, որը թույլ կտա)*

- ներկայացնել ընդդատության էությունն ու նշանակությունը,
- ներկայացնել դատական քննության նախապատրաստման փուլի հասկացությունը և բնութագրական առանձնահատկությունները,
- ներկայացնել դատական քննության փուլի էությունը, կառուցվածքը և ընդհանուր պայմանները,
- ներկայացնել դատաբանում ապացույցների հետազոտման կարգի առանձնահատկությունները,
- ներկայացնել դատավճռի էությունն ու տեսակները, դատավճռի կայացման դատավարական կարգը,
- ներկայացնել դատական ակտերի վերանայման հասկացությունը և տեսակները,
- ներկայացնել վերաքննիչ վարույթի՝ որպես դատական ակտերի վերանայման դատավարական ընթացակարգի հիմնական առանձնահատկությունները և վարույթի այս տեսակի օրենսդրական կարգավորումները,
- ներկայացնել դատական ակտերի վերանայման համակարգում վճռաբեկ վարույթի տեղը և դերը, վարույթի այս տեսակի օրենսդրական կարգավորումները,
- ներկայացնել բացառիկ վերանայման առանձնահատկությունները:
- ներկայացնել քրեական գործերով հատուկ վարույթների առանձնահատկությունները,
- ներկայացնել քրեական գործերով միջազգային համագործակցության հիմնական ուղղությունները, այս ոլորտում առկա միջազգային-իրավական և ներպետական օրենսդրական կարգավորումները:

*(բուն մասնագիտական կարողություններ)*

- ամբողջական պատկերացում կազմել դատական քննության նախապատրաստման էության, այս փուլում կայացվող դատավարական որոշումների վերաբերյալ,
- բացահայտել այն բոլոր ինստիտուտները, որոնք կազմում են դատական քննության փուլի բովանդակությունը, նկարագրել դրա կառուցվածքը, ցույց տալ կառուցվածքային տարրերի տրամաբանական հաջորդականությունը,
- լուսաբանել դատական քննության փուլի մրցակցային բնույթը, ներկայացնել դատական քննության փուլում իրականացվող դատավարական գործողությունների հաջորդականությունը և դատավարական կարգը,

- ամբողջական պատկերացում կազմել դատական քննության մասնակիցների իրավական վիճակի վերաբերյալ,
- նկարագրել դատավճռի տեսակները, ներկայացվող պահանջները և կառուցվածքը,
- լուսաբանել դատական ակտերի վերանայման ձևերը,
- ներկայացնել վերաքննության բնութագրական գծերը, վերաքննիչ դատարանի լիազորությունները, վերաքննիչ դատարանում գործի քննության առանձնահատկությունները և դատական ակտերի բեկանման հիմքերը,
- ներկայացնել վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման առանձնահատկությունները, լուսաբանել օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթը, վճռաբեկ դատարանի լիազորությունները,
- քննարկել դատական ակտերի վերանայման բացառիկ ձևերը,
- քննարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հատուկ վարույթների առանձնահատկությունները,
- ամբողջական պատկերացում կազմել միջազգային իրավական համագործակցության ուղղությունների վերաբերյալ, տիրապետել ոլորտը կարգավորող միջազգային-իրավական ակտերին և ներպետական կարգավորումներին:

*(ընդհանրական կարողություններ)*

- օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, «Moodle» բազմաֆունկցիոնալ համակարգ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ),
- վերլուծել փաստեր, կատարել հետևություններ,
- ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները:

Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական պարապմունք դասախոսի ղեկավարությամբ,
  2. անհատական և խմբային աշխատանք,
  3. ինքնուրույն աշխատանք,
  4. գրավոր և բանավոր ստուգում (հարցում, իրադրությունների քննարկում)
- Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված երկու ընթացիկ քննությունները գրավոր են (5-ական միավոր): Գնահատման չափանիշները՝ ըստ քննական առաջադրանքի, միավորների քայլը՝ 0.5:

Եզրափակիչ քննություն:

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2 և 3, 3 միավոր: Միավորների քայլը 1 է:

## **Դասընթացի բովանդակությունը**

**Թեմա 1. Քրեական գործերի ընդդատությունը** (2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Ընդդատության հասկացությունը և նշանակությունը:
2. Դատարանի օրինական կազմը:
3. Քրեական գործերի բաշխումը դատավորների միջև:
4. Ընդդատության տեսակները. տարածքային և առարկայական ընդդատություն:
5. Քրեական գործի ընդդատությունը որոշելու իրավասություն ունեցող սուբյեկտները քրեական դատավարության տարբեր փուլերում և նրանց լիազորությունները:

*Հարցեր 1-5- Անցկացվում է դասախոսություն ' խմբային քննարկման միջոցով:  
Հարցեր 1-5- սեմինար:*

**Թեմա 2. Նախնական դատական վարույթ. Դատական քննություն նախապատրաստելը** ( 1 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Նախնական դատական վարույթ. էությունը, խնդիրները և նշանակությունը:
2. Նախնական դատական վարույթի դատավարական կարգը և ընդունվող որոշումների տեսակները, կայացման հիմքերը և բովանդակությունը:

*Հարցեր 1-2- Անցկացվում է դասախոսություն ' խմբային քննարկման միջոցով:  
Հարցեր 1-2- սեմինար:*

**Թեմա 3. Դատական քննություն** ( 1 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Դատական քննության հասկացությունը, նշանակությունը և տարբերակման առանձնահատկությունները:
2. Դատական քննության մրցակցային բնույթը և դատարանի կարգավիճակը:
3. Դատական քննության կառուցվածքը:

*Հարցեր 1-3- Անցկացվում է դասախոսություն ' խմբային քննարկման միջոցով:  
Հարցեր 1-3- սեմինար:*

**Թեմա 4. Դատական քննության ընդհանուր պայմանները** (5 ժամ դասախ., 1 ժամ սեմինար)

1. Դատական քննության ընդհանուր պայմանների հասկացությունը, տեսակները և նշանակությունը: Դրանց փոխհարաբերակցությունը վարույթի սկզբունքների հետ:

2. Դատական վարույթի իրականացման ձևը և վայրը: Արտագնա դատալսումները: Դատական նիստի կարգը:
3. Դատական վարույթի հրապարակայնությունը, անմիջականությունը և բանավորությունը: Դատարանի կազմի անփոփոխելիությունը և ապացույցների հետազոտման անընդհատությունը:
4. Դատական նիստում որոշում կայացնելու կարգը: Վարույթին ներգրավված անձանց ներկայությունը դատական նիստին նրանց չներկայանալու հետևանքները:
5. Դատական քննության սահմանները: Ներկայացված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու կարգը: Դատական քննության ընթացքում այլ անձի մեղադրանք առաջադրելը:
6. Դատախազի կողմից քրեական հետապնդում իրականացնելուց և մեղադրանքից հրաժարվելը:
7. Դատական քննության ընթացքում խափանման միջոցի հարցի լուծումը:
8. Դատական նիստում կայացվող որոշումների տեսակները, դրանց ձևը, բովանդակությունը և կայացման կարգը:
9. Դատական սանկցիաների տեսակները և դրանց կիրառման ընդհանուր կարգը:
10. Դատալսումները հետաձգելը: Դատական նիստի արձանագրությունը:

Հարցեր 1-10- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:  
 Հարցեր 1-4, սեմինար, 5-10- Ինքնուրույն աշխատանք - հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում:

**Թեմա 5. Դատական քննության կառուցվածքը** (4 ժամ դասախոս-ն, 1 ժամ սեմինար)

1. Դատական քննության կառուցվածքային մասերը:
2. Դատական նիստի նախապատրաստական մասը:
3. Դատաքննության հասկացությունը, խնդիրները և նշանակությունը:
4. Ապացույցների հետազոտման ընդհանուր կանոնները: Դատական գործողությունների համակարգը:
5. Հարցաքննության հասկացությունը և նշանակությունը: Հարցաքննության ընդհանուր կարգը: Հարցաքննության հատուկ կարգը: Հարցաքննության կարգի առանձնահատկություններն ըստ հարցաքննվողի կարգավիճակի: Անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննության առանձնահատկությունները: Ցուցմունքների հրապարակումը:
6. Իրեղեն ապացույցի, քննչական և դատավարական գործողությունների արձանագրությունների և այլ փաստաթղթերի հետազոտումը:
7. Փորձագետի եզրակացության հետազոտումը և փորձագետի հարցաքննությունը:
8. Հետազոտման ենթակա ապացույցների ծավալը լրացնելը: Ապացույցների հետազոտման սահմանափակումը:
9. Դատաքննությունն ավարտելը:

10. Դատական վիճաբանությունների բովանդակությունը և կարգը: Ամբաստանյալի վերջին խոսքը:

Հարցեր 1-10- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:  
Հարցեր 1-3, սեմինար, 4-10 գործնական՝ ուսումնական դատական խաղի կազմակերպում, դատավարական փաստաթղթերի կազմում, Ինքնուրույն աշխատանք- հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում:

**Թեմա 6. Դատավճիռ կայացնելը** ( 2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Դատավճռի հասկացությունը, նշանակությունը և հատկանիշները:  
Դատավճռի օրինականության, հիմնավորվածության, պատճառաբանվածության և արդարացության պահանջները:
2. Դատավճիռ կայացնելիս դատարանի լուծման ենթակա հարցերը:
3. Դատավճռի տեսակները: Արդարացման և մեղադրական դատավճիռների կայացման հիմքերը:
4. Դատավճռի բովանդակությունը, կառուցվածքը և այն կազմելու կարգը:
5. Դատավճռի հրապարակումը: Մեղադրյալին և արդարացվածին դատավճռի պատճեն հանձնելը: Դատարանի լրացուցիչ որոշման հասկացությունը, հիմքերը և կայացման կարգը:

Հարցեր 1-5 - Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:  
Հարցեր 1-3 - Ինքնուրույն աշխատանք- հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում:

Հարց 4 - Գործնական՝ դատավարական փաստաթղթի կազմում, դրա հմտությունների քննարկում:

**Թեմա 7. Դատական քննության արագացված կարգ** (2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Դատական քննության արագացված կարգի էությունը և կիրառման հիմքերը:
2. Արագացված կարգով դատական քննություն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգը:
3. Արագացված կարգով դատական քննության արդյունքում կայացված դատավճռի բողոքարկման կարգը:

Հարցեր 1-3 - Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:  
Հարցեր 1-3 - Ինքնուրույն աշխատանք- հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում:

**Թեմա 8. Վարույթը վերաքննիչ դատարանում/** 4 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Վերքննության հասկացությունը և նշանակությունը: Գործի վերանայումը վերաքննության կարգով:
2. Վերաքննության առարկան: Վերաքննության սահմանները:
3. Վերաքննիչ բողոքարկման ժամկետները և կարգը: Վերաքննիչ բողոքի պատասխանը:
4. Վերաքննիչ դատալսումների մասնակիցները: Վերաքննիչ դատաքննության կարգը և դրա առանձնահատկությունները:
5. Եզրափակիչ դատական ակտ կայացնելը: Վերաքննության արդյունքում կայացվող դատական ակտերը:
6. Վերաքննության կարգով բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերը. (փաստական հանգամանքների մասին դատավճռում կամ որոշման մեջ շարադրված հետևությունների անհամապատասխանությունն ապացույցներին, միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը, նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառումը, քրեադատավարական օրենքի էական խախտումը, նշանակված պատժի անարդարացիությունը, նոր փաստական կամ իրավական հանգամանքի առկայությունը):

Հարցեր 1-6- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:  
 Հարցեր 1—2 սեմինար, 3-4 գործնական՝ խնդիրների լուծում և դատական-ուսումնական խաղի կազմակերպում, 4- Ինքնուրույն աշխատանք - հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում:

**Թեմա 9. Վճռաբեկ վարույթ ( 4 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)**

1. Վճռաբեկության հասկացությունը և նշանակությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները: Վճռաբեկության կարգով դատական վերանայման առանձնահատկությունները: Վճռաբեկության առարկան: Վճռաբեկ ատյանում գործի քննության մասնակիցները, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Վճռաբեկ բողոքարկման ժամկետները և կարգը:
2. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հասկացությունը և պայմանները:
3. Վճռաբեկ բողոքի բովանդակությունը և ձևը:
4. Վճռաբեկ բողոքով նախնական վարույթի կարգը: Վճռաբեկ բողոքի պատասխանը:
5. Վճռաբեկության սահմանները:
6. Վճռաբեկ դատարանի եզրափակիչ դատական ակտերի հասկացությունը, տեսակները և կարգը:
7. Վճռաբեկության կարգով բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերը: Վճռաբեկությամբ եզրափակիչ որոշման հրապարակմանը հաջորդող վարույթը:

Հարցեր 1-7- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:  
 Հարցեր 1-7 սեմինար, գործնական՝ խնդիրների լուծում, 6- Ինքնուրույն աշխատանք-հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում:

**Թեմա 10. Բացառիկ վերանայում ( 2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)**

1. Բացառիկ վերանայման հասկացությունը և նշանակությունը: Բացառիկ վերանայման վարույթի առանձնահատկությունները: Բացառիկ վերանայման տեսակները: Բացառիկ վերանայման առարկան և հիմքերը: Բացառիկ վերանայման բողոք բերելու իրավունք ունեցող անձինք:
2. Դատական ակտերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր երևան եկած հանգամանքների հետևանքով:
3. Գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով:
4. Բացառիկ վերանայման բողոքի բովանդակությունը և ձևը: Բացառիկ վերանայման վարույթի հարուցումը: Բացառիկ վերանայման արդյունքում կայացվող դատական ակտերը և դրանց հրապարակմանը հաջորդող վարույթը:

Հարցեր 1-4- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 1-3- Ինքնուրույն աշխատանք- հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում, 4 գործնական դատավարական փաստաթղթի կազմում:

**Թեմա 11. Անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները**

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի հասկացությունը և դրա առանձնացման հիմքերը: Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի առանձնացումը՝ որպես դատավարական ձևի տարբերակում: Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի միջազգային իավական կարգավորումը:
2. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի ընդհանուր պայմանները: Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթում ապացուցման ենթակա հանգամանքները: Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի արագությունը և առանձնացումը: Պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցությունն անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթին: Անչափահասի ձերբակալումը կամ կալանավորումը:
3. Անչափահաս մեղադրյալի հարցաքննության առանձնահատկությունները:
4. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով քրեական հետապնդումը դադարեցնելը:
5. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ մինչդական և դատական վարույթների առանձնահատկությունները:
6. Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառելը: Անչափահասի նկատմամբ դատավճիռ կայացնելիս լուծման ենթակա հարցերը: Ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելը:

Հարցեր 1-6- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 1-6- գործնական՝ խնդիրների լուծում, Ինքնուրույն աշխատանք- հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են

թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում:

**Թեմա 12. Միջազգային պայմանագրով սահմանված արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող անձանց վերաբերյալ վարույթը**(1 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Միջազգային պայմանագրով սահմանված արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող անձանց վերաբերյալ վարույթի հասկացությունը և նշանակությունը:
2. Միջազգային պայմանագրով սահմանված արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող անձանց վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները:
3. Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձանց գտնվելը Հայաստանի Հանրապետության իրավագործության ներքո: Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձինք:
4. Անձնական անձեռնմխելիությունը: Քրեական հետապնդումից անձեռնմխելիությունը:
5. Ցուցմունք չտալու և նյութեր չներկայացնելու արտոնությունը:
6. Շինությունների և փաստաթղթերի անձեռնմխելիությունը:

Հարցեր 1-6- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:  
Հարցեր 1-3 սեմինար, 4-6 Ինքնուրույն աշխատանք- հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում:

**Թեմա 13. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթը**  
(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի հասկացությունը, խնդիրները և նշանակությունը:
2. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթը՝ որպես դատավարական ձևի տարբերակման տեսակ: Բժշկական բնույթի հարկադրանքի վարույթի կիրառման հիմքերը և սահմանները:
3. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մինչդատական վարույթի առանձնահատկությունները: Ապացուցման առարկայի առանձնահատկությունները: Քրեական գործերով վարույթի անջատումը: Փորձաքննության պարտադիր կատարումը: Անձին հոգեբուժական հաստատությունում տեղավորելը: Պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը: Նշված գործերով նախաքննության ավարտման առանձնահատկությունները:
4. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու դատական վարույթի առանձնահատկությունները: Նախնական դատալուծումները բժշկական հարկադրանքի վարույթով: Դատալուծումների մասնակիցները: Հիմնական դատալուծումները բժշկական հարկադրանքի վարույթով: Դատական որոշում

կայացնելիս՝ դատարանի լուծմանը ենթակա հարցերը: Դատական ակտերի տեսակները: Լրացուցիչ դատալուծումները բժշկական հարկադրանքի վարույթով:  
5. Բժշկական բնույթի հարկադրական միջոցը վերացնելը կամ փոփոխելը:

Հարցեր 1-5- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:  
Հարցեր 1-5- գործնական՝ խնդիրների լուծում, հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում:

#### **Թեմա 14. Քրեական գործերով միջազգային համագործակցությունը** (4 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու էությունը և նշանակությունը:
2. Միջազգային պայմանագրերի առկայության պայմաններում իրավական օգնության միջնորդությունների կատարման կարգը:
3. Միջազգային պայմանագրերի առկայության պայմաններում հանցագործություն կատարած անձանց հանձնելը օտարերկրյա պետությանը և հանցագործություն կատարած անձին օտարերկրյա պետության կողմից Հայաստանի Հանրապետությանը հանձնելը:
4. Միջազգային պայմանագրերի բացակայության պայմաններում իրավական օգնության միջնորդությունների կատարման կարգը:
5. Միջազգային պայմանագրերի բացակայության պայմաններում հանցագործություն կատարած անձանց հանձնելը օտարերկրյա պետությանը և հանցագործություն կատարած անձին օտարերկրյա պետության կողմից Հայաստանի Հանրապետությանը հանձնելը:

Հարցեր 1-5- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:  
Հարցեր 1-5- գործնական՝ խնդիրների լուծում: հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում:

#### **Վերաբերելի մասնագիտական գրականության և նորմատիվ իրավական ակտերի ցանկ**

1. ՀՀ Սահմանադրություն:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, մենագրություն, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք» հրատարակչություն, 2010:
3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք:
4. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք (նախագիծ):

5. ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ. Եր., 2011
6. ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ. Հատոր 2, Եր., 2013: <https://www.osce.org/hy/yerevan/116466?download=true>
7. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, Հ. 3, Երևան, 2017:
8. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս: ԵՊՀ հրատ., Երևան, 2019թ.:
9. Մելիքյան Ռ. Վերաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում, Երևան, 2007թ.:
10. Հովհաննիսյան Ա. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերջնական դատավարական որոշումների վերանայման հիմնահարցերը քրեական դատավարությունում, Երևան, 2018թ.:
11. Սուջյան Տ. Վճռաբեկությունը որպես դատական ակտերի վերանայման ձև ՀՀ քրեական դատավարությունում, Երևան, 2017թ.:
12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2014թ.:

Վերաբերելի դատական ակտերը (այդ թվում՝ ՄԻԵԴ վճիռները) և առավել ընդլայնված գրականության ցանկը տեղադրված է ԵՊՀ էլեկտրոնային ուսուցման հարթակի՝ դասընթացին վերաբերող էջում:

**Հարցաշար**  
**«Քրեական դատավարություն- 3» դասընթացի**  
**առաջին ընթացիկ քննության**

1. Ընդդատության հասկացությունը և նշանակությունը:
2. Դատարանի օրինական կազմը:
3. Քրեական գործերի բաշխումը դատավորների միջև:
4. Ընդդատության տեսակները: Առարկայական ընդդատությունը: Տարածքային ընդդատությունը:
5. Վարույթի փոխանցումն ըստ ընդդատության:
6. Ընդդատության հարցի լուծումը մի քանի մեղադրյալների և մի քանի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով վարույթները միացնելիս:
7. Նախնական դատական վարույթի էությունը, խնդիրները և նանակությունը:
8. Նախնական դատական վարույթի դատավարական կարգը և ընդունվող որոշումների տեսակները, կայացման հիմքերը և բովանդակությունը:
9. Դատական քննության հասկացությունը, նշանակությունը և տարբերակման առանձնահատկությունները:

10. Դատական քննության մրցակցային բնույթը և դատարանի կարգավիճակը:
11. Դատական քննության պայմանների հասկացությունը, տեսակները և նշանակությունը:
12. Դատական վարույթի հրապարակայնությունը, անմիջականությունը և բանավորությունը:
13. Դատական վարույթի իրականացման ձևը և վայրը: Արտագնա դատալսումները: Դատական նիստի կարգը:
14. Դատարանի կազմի անփոփոխելիությունը և դատական քննության անընդհատությունը: Դատական նիստում որոշում կայացնելու կարգը:
15. Դատական քննության մասնակիցները և նրանց չներկայանալու հետևանքները:
16. Դատական քննության սահմանների հասկացությունը և նշանակությունը:
17. Դատական քննության ընթացքում մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու կարգը:
18. Դատախազի կողմից քրեական հետապնդում իրականացնելուց և մեղադրանքից հրաժարվելը:
19. Դատական քննության ընթացքում խափանման միջոցի հարցի լուծումը:
20. Դատական սանկցիաների տեսակները և դրանց կիրառման ընդհանուր կարգը:
21. Դատական նիստում կայացվող որոշումների տեսակները, դրանց ձևը, բովանդակությունը և կայացման կարգը:
22. Դատական քննության կառուցվածքային մասերը:
23. Դատական նիստի նախապատրաստական մասը:
24. Դատաքննության հասկացությունը, խնդիրները և նշանակությունը:
25. Ապացույցների հետազոտման ընդհանուր կանոնները: Դատական գործողությունների համակարգը:
26. Հարցաքննության հասկացությունը և նշանակությունը: Հարցաքննության կարգը:
27. Հարցաքննության կարգի առանձնահատկություններն ըստ հարցաքննվողի կարգավիճակի:
28. Անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննության առանձնահատկությունները:
29. Ցուցմունքների հրապարակումը:
30. Իրեղեն ապացույցի, քննչական և դատավարական գործողությունների արձանագրությունների և այլ փաստաթղթերի հետազոտումը:
31. Փորձագետի եզրակացության հետազոտումը և փորձագետի հարցաքննությունը:
32. Հետազոտման ենթակա ապացույցների ծավալը լրացնելը: Ապացույցների հետազոտման սահմանափակումը:
33. Դատաքննությունն ավարտելը:
34. Դատական վիճաբանությունների բովանդակությունը և կարգը: Ամբաստանյալի վերջին խոսքը:
35. Դատավճռի հասկացությունը, նշանակությունը և հատկանիշները:
36. Դատավճռի օրինականության, հիմնավորվածության, պատճառաբանվածության և արդարացության պահանջները:

37. Դատավճռի տեսակները: Արդարացման և մեղադրական դատավճիռների կայացման հիմքերը:
38. Դատավճռի բովանդակությունը, կառուցվածքը և այն կազմելու կարգը: Դատավճռի հրապարակումը:
39. Դատական քննության արագացված կարգի էությունը և կիրառման հիմքերը:
40. Արագացված կարգով դատական քննություն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգը:
41. Արագացված կարգով դատական քննության արդյունքում կայացված դատավճռի բողոքարկման կարգը:
42. Վերքննության հասկացությունը և նշանակությունը:
43. Վերաքննիչ բողոքարկման ժամկետները և կարգը:
44. Վերքննության առարկան և սահմանները:
45. Վերաքննիչ դատալսումների մասնակիցները և նրանց դատավարական վիճակը:
46. Վերաքննիչ դատաքննության կարգը և դրա առանձնահատկությունները:
47. Վերաքննության կարգով բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերը:
48. Վերաքննության արդյունքում կայացվող դատական ակտերը:
49. Վճռաբեկության հասկացությունը և նշանակությունը:
50. Վճռաբեկ դատարանի լիազորությունները:
51. Վճռաբեկության կարգով դատական վերանայման առանձնահատկությունները:
52. Վճռաբեկության առարկան և սահմանները:
53. Վճռաբեկ աստյանում գործի քննության մասնակիցները, նրանց իրավունքներն ու պարտականությունները:
54. Վճռաբեկ բողոքարկման ժամկետները և կարգը:
55. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հասկացությունը և պայմանները:
56. Վճռաբեկ բողոքի բովանդակությունը և ձևը:
57. Վճռաբեկության կարգով բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերը:
58. Բացառիկ վերանայման հասկացությունը և նշանակությունը: Բացառիկ վերանայման վարույթի առանձնահատկությունները: Բացառիկ վերանայման տեսակները: Բացառիկ վերանայման առարկան և հիմքերը: Բացառիկ վերանայման բողոք բերելու իրավունք ունեցող անձինք:
59. Դատական ակտերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր երևան եկած հանգամանքների հետևանքով:
60. Գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով:
61. Բացառիկ վերանայման բողոքի բովանդակությունը և ձևը: Բացառիկ վերանայման վարույթի հարուցումը: Բացառիկ վերանայման արդյունքում կայացվող դատական ակտերը և դրանց հրապարակմանը հաջորդող վարույթը:
62. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի հասկացությունը և դրա առանձնացման հիմքերը:
63. Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթում ապացուցման ենթակա հանգամանքները:

64. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի հասկացությունը, խնդիրները և հիմքերը:
65. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մինչդատական վարույթի առանձնահատկությունները:
66. Միջազգային պայմանագրով սահմանված արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող անձանց վերաբերյալ վարույթի հասկացությունը և նշանակությունը:
67. Միջպետական հարաբերություններում քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու կարգը:
68. Իրավական օգնության հարցերով հաղորդակցություն իրականացնող մարմինները:
69. Մեկից ավելի միջազգային պայմանագրերով նախատեսված հարցումները կատարելը:
70. Միջազգային պայմանագրերից բխող հարցումների կատարումը մերժելը:
71. Հանցագործություն կատարած անձանց հանձնելը օտարերկրյա պետությանը:
72. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ձերբակալման, ժամանակավոր կալանավորման և հանձնման համար կալանավորման կարգը:
73. Հանձնման թույլտվության վերաբերյալ կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշում ընդունելու իրավասություն ունեցող մարմինները և այդ որոշման բողոքարկման կարգը:
74. Հանցագործություն կատարած անձին օտարերկրյա պետության կողմից Հայաստանի Հանրապետությանը հանձնելը:
75. Միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում իրավական օգնություն ցույց տալու պայմանները: Փոխադարձություն: